ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2026թ. Հունվարի 16-ի, N 21-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 18 (տասնութ) քաղաքացու հատկացնել 390000 (երեք հարյուր իննսուն հազար) դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին հանձնարարել ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում՝ բանկին փոխանցելու միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 1/19/2026 15:24:17 GMT

Signed by: MOVSISYAN SERGEY 33098904B7

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ